Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ 1700-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆԸ

(12 սեպտեմբերի 2003 թ., Ս. Էջմիածին)

Սրբազան Հայրեր,
Հոգևոր եղբայրներ,
Գիտաժողովի սիրելի մասնակիցներ.

Հոգու անսահման բերկրանքով ողջունում ենք նվիրական մեր սրբավայրի՝ Կաթողիկե Մայր Տաճարի 1700-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի բացումը Սուրբ Էջմիածնում: Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում գիտաժողովի բոլոր մասնակիցներիդ և Մեր գնահատանքը, որ սիրով ու պատրաստակամությամբ արձագանքեցիք Մայր Աթոռի հրավերին:

Այսօր Ձեզ հետ միասին հրաշալի առիթն ունենք վերստին ապրելու լուսեղեն խորհուրդը Աստվածակառույց Սուրբ Էջմիածնի, որ Երկնավորի բացառիկ պարգևն է մեր ժողովրդին: Աստծո Էջքով նվիրագործված այս սրբավայրից 1700 տարի առաջ քրիստոնեության լույսը ճառագայթ սփռվեց համայն Հայաստանի ու հայոց վրա: Որտեղ էլ տարագիր ապրեցինք, մեր հայացքները ուղղեցինք դեպի Արարատի լանջին վեհորեն կանգնած ու մեզ միշտ կանչող ու միավորող հավատի մեր օրրանը, Միածնաէջ հոգևոր մեր կենտրոնը՝ Մայր Տաճարը ամենայն հայոց: Աղոթախոս նրա քարերին են դիպել մեր մեծ սրբերի՝ Գրիգոր Լուսավորչի, Տրդատ թագավորի ձեռքերը, Իջման Սուրբ Սեղանի առջև ծնրադրել են մեր երանաշնորհ ու երախտաբաժան Հայրապետները, նրա կամարների ներքո Մաշտոց Սուրբ Վարդապետը հայոց նորագյուտ Այբուբենն է ուսուցանել հայ մանուկներին և այստեղ են վասն հավատի ու հայրենյաց մարտերից առաջ ուխտել և օրհնություն ստացել հայոց քաջերը: Այսպե՛ս գիտենք Սուրբ Էջմիածինը ու այսպե՛ս պիտի ճանաչենք միշտ՝ «հայ հոգու զորության ակունք ու գանձարան, ազատության սեր ու դրոշ, հայ հոգու պարծանք ու հաղթություն, գիտենք մեզ Մայր պաշտելի՝ գորովագութ սիրով մեզ շաղկապող, սիրո մեջ հաստատող ու պահպանող» (*Հայրապետական Կոնդակ, թիվ 124, 2003 թ.*):

Սիրելիներ, այսօր դուք ևս գիտական ձեր ուսումնասիրություններով նշանավորում եք Մայր Տաճարի մեծ տարեդարձը: Նրա պատմությանը, ճարտարապետությանը և այլ հարցերին նվիրված ձեր զեկուցումները մեկ անգամ էլ ներկայացնելու են մեր Եկեղեցու հոգևոր կենտրոն Սուրբ Էջմիածինը՝ իր սրբազան առաքելությամբ համազգային մեր կյանքում և քրիստոնեական Եկեղեցիների մեծ ընտանիքում: Երեկ, այսօր և միշտ նույնն է նրա առաքելությունը. Աստծո սերը և հավատի լույսը մեր ժողովրդի հոգում անմար պահելու առաքելությունն է այդ, որը դարձել է նաև հայորդուն հայրենյաց արժեքներով ապրեցնելու լուսավոր ճանապարհ, Հարության հավատով դեպի ազատ Հայաստանի այսօրը առաջ-

նորդելու ճանապարհ: Սուրբ Էջմիածնից ճառագող հավատի մեծագույն գանձը իր հոգում և նախնյաց հարուստ ժառանգությունը իր ուսերին մեր ժողովուրդը կերտում է իր նոր կյանքը՝ մասնակցություն բերելով ժողովուրդների ու պետությունների համագործակցությանը՝ հանուն աշխարհում խաղաղության հաստատման ու առաջընթացի: Այսօր, երբ ետընթաց են ապրում հոգևոր արժեքներն ու բարոյական սկզբունքները, երբ նյութականն ու մարմնականը դառնում են գերադասելիություններ, մեր ժողովրդի համար նույնպես լուրջ մտահոգություն է հոգևորի վերարժեվորումը հասարակական կյանքում: Պատմությամբ ու կյանքով է վկայված՝ առ Աստված հավատի պակասից են ծնունդ առնում բոլոր չարիքները՝ ատելությունը, օրինազանցությունը, բռնությունները, անտարբերությունը մարդու հանդեպ, նրա կարիքի ու ցավի հանդեպ: Գիտության ձեռքբերումները և տեխնիկական նորանոր հնարավորությունները չեն կարող սնունդ դառնալ մարդկային հոգու համար և, մանավանդ, չեն կարող պատասխան տալ այն հարցին, թե ինչպե՞ս երջանիկ լինի իր ընտանիքում, մերձավորների շրջանում ու հասարակության մեջ: Օրենք ու օրենսդրություն՝ լավագույնս անգամ մշակված, չեն կարող գործել առանց մարդկային հոգու առաքինության, որի ակունքը հավատն է՝ Աստծո հետ իր արարածի կենդանի հաղորդակցությունը: Հավատարիմ այս ճանաչողությանը ու մեր հայրերի ավանդներին, Մայր Աթոռը շարունակում է իր առաքելությունը, և փառք Տիրոջ, այսօր նորոգ զարթոնք է ապրում: Հայրենիքում ամենուր կառուցվում ու վերակառուցվում են եկեղեցիներ, օրավուր զորանում է քարոզչությունն ու բազմազան հոգևոր-կրթական գործունեությունը, հոգևոր ու ազգային վերածնունդ է Սփյուռքում և Հայրենիքում: Աստված հաճեցավ վերհառնումը մեր ժողովրդի, հաճեցավ պայծառակերպությունը հայորդյաց հոգիների և 1700-ամյա Սուրբ Էջմիածնով օրհնեց հավատի մեր ընթացքը դեպի նոր հազարամյակ:

Մեր Տիրոջ Իջման Սուրբ Սեղանի առջև խոնարհյալ աղոթք ենք բարձրացնում երկինք՝ հայցելով, որ Աստվածային լույսի և օրհնության խորանաշատ դռները միշտ բացված լինեն Հայոց աշխարհի վրա և միշտ բանուկ լինի դեպի հայ հոգու սրբօրրանը՝ դեպի Միածնաէջ մեր Մայր Տաճարը առաջնորդող հայորդյաց ճանապարհը:

Սիրելի ներկաներ, Մայր Տաճարի 1700-ամյակին նվիրված գիտաժողովի բացման այս ուրախ առիթով Հայրապետական Մեր մասնավոր գնահատանքն ենք բերում նրա կազմակերպիչներին՝ Սուրբ Էջմիածնի այն ուխտյալ միաբաններին, ովքեր, գլխավորությամբ ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի, սիրով ու ամենայն ջանադրությամբ հոգացին գիտաժողովի նախապատրաստական աշխատանքները: Մենք հավատում ենք, որ գիտաժողովը կարևոր ավանդ է բերելու Հայ Եկեղեցու շուրջ ճանաչողության ընդլայնմանը, միաժամանակ՝ ներկայացնելով ազգային-եկեղեցական մեր կյանքում առկա հրամայականները և մեկ անգամ ևս արժեվորելով Հայ Եկեղեցու առաքելությունը, նոր քաջալերություն է դառնալու քրիստոնեական մեր կյանքին:

Տիրոջ զորակցությունն ենք հայցում բոլորիդ և մաղթում բարի ընթացք ու արդյունավորում գիտաժողովի աշխատանքներին:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեան: Ամէն»: